ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ-ն ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
82	Եփման ենթակա տեսակ, փաթեթավորումը՝ գործարանային, 350-500 գրամ, ստվարաթղթե տուփով, գործարանային փաթեթավորմամբ: Վարսակի փաթիլներում խոնավությունը պետք է լինի 12 %–ից ոչ ավել, մոխրայնությունը՝ 2.1%–ից ոչ ավել, թթվայնությունը՝ 5.0 %-ից ոչ ավել, աղբային խառնուրդները՝ 0.3 %-ից ոչ ավել, վնասատուներով վարակվածություն չի թույլատրվում: ԳՕՍՏ 21149-93: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: Մատակարարումն իրականացվում է աշխատանքային օրվա ժամը 08:30-09:00 ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Սննդամթերքի փոխադրումը

	տրանսպորտային միջոցներով իրականացնելիս պետք է ապահովել հետևյալ պայմանները՝ տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովված լինի աղտոտումից, կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների ներթափանցումից, տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պետք է պատրաստված լինի լվացվող և ոչ թունավոր նյութերից և պետք է պարբերաբար ենթարկվի անհրաժեշտ մաքրման, լվացման և ախտահանման: Առաքողները պետք է ապահովված լինեն սանիտարական արտահագուստով (խալաթ և ձեռնոցներ): Տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 60 րոպե: Մատակարարումը կատարվում է Վաճառողի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել լաբորատոր փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ФУД МУД в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՀ-ԷԱՃԱՊԶԲ-2026/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
82	